



Հ. ԱՇԱԽՅԱՆ

ԵՐԵՔ ՀԱՐՑ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՅԲՈՒԻԲԵՆԻ ՇՈՒՐՉԸ

Ա.

Երբ Ս. Մեսրոպը կազմեց հայերեն այբուբենը, այդ տառերը դասավորելու համար ի՞նչ սկզբունքի կամ ի՞նչ օրինակի հետևեց:

Ինչպես տառերի ձեր համար Ս. Մեսրոպը օգտվել է շրջակա ազգերի այբուբենից, այդպես կարող է լինել նաև նրանց դասավորության կամ շարքի համար: Այս բանն ստուգել շատ հեշտ է: Ուստի տեսնենք նախապես, թե ի՞նչ շարք ունեն այդ այբուբենները:

Բոլոր սեմական հին այբուբենները (փյունիկերեն, ասորերեն) ունեն հետևյալ շարքը:  
ա, բ, գ, դ, ե, վ, թ, ի, կ, լ, մ, ն,

ս, ՛, ՛ (ային), պ (փ), ծ, կ, ո, շ, թ:

Հունական այբուբենի դասավորությունն է հետևյալը:

ա, բ, գ, դ, ե, վ, թ, ի, կ, լ, մ, ն, քս, ո,  
պ, ս, ՛, Փ, Փ, Փս, ով:

Հին իրանյան այբուբենների (զենդերեն, հին պարսկերեն, պահլավերեն) դասավորությունը հայտնի չէ: Բայց պետք է կարծել, որ նույնն էր սեմական այբուբենի հետ, քանի որ նրանից է ծագած և իր տառաձեզերով էլ նման է: Այն մի քանի զրերը,  
որ ավելացած էին իրանական այբուբենի վրա (ծ, յ, ՞, ՞) կարող էին մյուս զրերի միջև դասավորված լինել:

Պարզ մի համեմտառություն սեմական, հույն և հայ այբուբենների միջև ցույց է տալիս, որ հայ տառերը չունեն բնավ սե-

մականի շարքը, որ թեև ոկորից համաձայն է մերին (չորս տառ), բայց շուտով շեղվում է հ, Վ, Խ, և տառերով և ավելի հեռուն, և տառից հետո՝ բոլորովով լիանգարվում է: Հունարենը, սակայն, քայլ առ քայլ համաձայն է մեր այբուբենին, որ հեռանում է նրանից միմիայն իր գերազանց ճոխության պատճառով: Հավելվածական տառերն անցնելուց հետո, դասավորության նույնությունը շարունակվում է մինչև ք. սրան հաջորդող հունարեն փս և ով զրերը չկան հայերենում: Ան հայերեն և հունարեն այբուբենները գեմ դեմի իրենց բնական շարքով:

Ա Բ Գ Դ Ե Զ Հ . Թ . Ժ Ի  
Ա Յ Վ Ր Ճ Է Զ Լ Յ Ժ Ի

Լ Խ Ծ Կ Զ Ջ Շ Ճ Մ Յ  
. . . . . . . . . . . .

Ն Շ . Ո Չ Պ Ջ Ջ Ռ Յ Վ Տ  
Ն . Յ Օ . Ա Ռ Ս . Պ Տ

Ր Ց Ւ Փ Ք Վ Ֆ Վ Ա  
. . Վ Փ Խ Վ Ա

Հունարեն այբուբենը ընդամենը 3 տառ ունի, որոնցից զուրկ ենք մենք (Յ, Վ, Պ փս, Վ ով) բարեբախտաբար: Իսկ մենք ընդամենը 15 տառ ունենք, որից զուրկ է հունարենը. այդ տառերն են այբուբենական կարգով՝

Ը, Ժ, Լ, Խ, Ծ, Կ, Ջ, Շ, Ձ, Պ, Վ, Ֆ, Ր, Ց:

Այս գրերը տեղավորելու համար երկու միջոցի կարող էր դիմել Ս. Մեսրոպը, այն է՝ տվելացնել դրանք և գրից հետո՝ իրեն առանձին խումբ և կամ ներմուծել մյուս տառերի շարքի մեջ, Մեսրոպը առաջին միջոցին դիմեց վրացերենի համար, իսկ երկրորդին՝ հայերենի համար:

Այս ներմուծելի գրերն էլ կարելի էր երեք ձեռվ դասավորել Առաջին՝ գրերը շարելով առանց մասնավոր դիտումի կամ նպատակի, երկրորդ՝ հետևելով իրանական այրութենին, ուր գտնվում էր արդեն մեր տառերի մի մասը (ինչ. ժ, Յ, Ճ, Ջ, Վ), երրորդ՝ ձայնախոսորեն նման հնչյուն ունեցող տառերը գնել իրար մոտ, ինչպես ունենք վրացերեն այրութենի մեջ: Այստեղ իրար մոտ են դրված Ղ, Պ—Ծ, Ճ, Ջ—Խ, Վ—Կ, Հ, Ե տառերը:

Այս ուղղությամբ որոնենք նաև մեր, հավելվածական տառերը:

Հ տառը ոչ մի այրութենի մեջ չկա. դա հայերենին հատուկ հնչյուն է. Մեսրոպը հնարել է այդ տառը և որովհետև հնչմամբ նման է է ձայնին, ուստի ձեռվ էլ ածանցել է նրանից. Է և Ը զանազանվում են իրարից միմիայն նրանով, որ առաջինի մեջ թեր մեջտեղումն է, երկրորդի մեջ թեր վերելից է:

Ուրեմն Ը տառը դրված է է տառի մոտ կամ ձայնի նմանության պատճառով և կամ ձեր նմանության պատճառով:

Այս երկու պատճառներից առաջինը ըստ իս արժեք չունի մեղ համար և պետք է չնպացանել, որովհետև եթե ձայնի կամ հնչման նմանությունը որևէ դեր խաղացած լիներ, հապա ինչու Ժ, Ճ, Ջ, Ինչպես և Խ, Ը, Ձ կամ Խ, Յ, Ե, Ա և Վ իրարից այդքան հեռացած պիտի գտնվեն:

Մնում է ընդունել թե Ը տառը դրված է է տառի մոտ՝ միայն ձեր նմանության պատճառով:

Այժմ զանք Ն տառին:

Այս տառը կազմված է պահավական շ տառի նմանությամբ (տես իմ «Հայոց գրերը», էջ 249) և բոնում է մեր այլութենի մեջ հունական Ե տառը տեղը: Ինչու Որովհետև տառադարձության մեջ հույները հաճախ հայերեն շի դեմ դրել

են Ե (տես անդ 248): Ուրեմն այստեղ էլ ձայնի նմանության հարց կա: Բայց քը քը առաջ ձայնի նմանության կապը մերժում էինք: Զի՞ կարող արդյոք այստեղ էլ լինել ձեր նմանության հարց:

Ըստ իս ձեր նմանությունը այստեղ էլ դեր ունի:

Ն տառը կազմված է մի երկնյուղ խողովակից: որի աջ թեր վերի մասը կուրզված է և ձախ թեր վլխին էլ մի կտուց է ավելացած: Ն տառն էլ նույն ձեն ունի, միայն թե երկնյուղ խողովակը այստեղ ավելի կլորակ ձեւ ունի, իսկ կտուցը մի քիչ տարբեր զերք է ոտացած:

Ուրեմն այստեղ էլ տառը ստացել է իր տեղը մասամբ ձայնի նմանության, բայց ավելի շատ ձեր նմանության պատճառով:

Անցնենք այժմ մյուս տառերի տեղափոխման:

Ի տառից հետո գալիս է Լ: Այս վերջինը եթե հնչման նմանության հետեւը, պետք է դրվեր Ղ, տառի կողքին, որից և ձեռցած է: Բայց նա դրվել է Ի տառից հետո, որովհետեւ նույնն է ձեռվ.—Ի կազմված է մի ուղղահայաց սյունից, որի աջ կողքին ավելացել է մի Թե. Լ տառի մեջ ուղղահայաց սյունը նույնն է, միայն թեր իջնում է ցած:

Խ տառը, եթե հետեւը հնչման, պիտի գտնվեր Հ տառի կողքին. բայց ոչ, նա գտնվում է ի—Լ տառերի կողքին, որովհետեւ ձեռվ նման է սրանց: Ի և Ը կազմված են մի մի ուղղահայաց սյունից, որոնց կողքին ավելացել է մի մի թե, մեկի մեջ դրված մեջտեղում, մյուսի մեջ՝ ստորոտում: Իսկ Խ տառի մեջ սյունը նույնն է, միայն թե մեջտեղի թեր կորանալով վերև է բարձրացած Ի—Խ:

Ժ տառը եթե հետեւը հնչման, պիտի գտնվեր Զ, Շ կամ Ս տառի մոտ: Բայց ոչ նա գտնվում է Թ տառի մոտ, որովհետեւ ձեռվ նույն է սրա հետ: Հանեցեք Թ տառի ձախակողմյան սյունը և կտանաք Ժ. (հին արձանագրությանց մեջ շատ սովորական է Ժ տառի համար այս ձերը):

Վ տառը հին արձանագրությանց մեջ ունի Կ ձերը, որի մեջ երկու սյուները կանգնած են հավասար բարձրությամբ:

Այս ձեռվ նա միւնույնն է, ինչ որ Ս,  
միայն տակից ունի մի պոչ։ Այս նմանու-  
թյան պատճառով ահա դրված է Ս-ի ճիշտ  
կողքին։

Զարմանալի է Բ տառը. նա ձևացած է հունարեն Պ տառի նմանությամբ. բայց նա չի դրված հունարեն Պ-ի դեմ, այլ հայերեն Տ-ից հետո: Խնչու: Որովհեսկ հայերեն Տ հին ժամանակ ուներ Մ ձեռը (գրեթե

Մ), որպէս ճիշտ նման էր թ տառին, ուստի  
այս երկուաը դրված են կողք կողքի:

15 հավելվածական տառերից կեսը (7  
տառ) այսպիսով իր որոշ տեղը ստացավ  
հատկապես ձեր նմանության պատճառով։  
Մյուս 8 տառերի մասին առայժմ ոչինչ  
չեմ կարող ասել Երանք էլ թերևս հետե-  
ված լինեն պահլավերենի տառական շար-  
քին։

(Շաբանակելի)

Սամօք. —Այսուրենը ըստ տառերի նմանության շարելու լավագույն օրինակը ցույց է տալիս արարական այբուրենը. Ծրաբական այբուրենը իրեն սեմական՝ ուներ նախապես բոլորպին այլ շարք. Շատ ուշ՝ նման տառերը իրար մաս ըերելով հին շարքը բոլորպին փոխեցին. Այսպես որ այսօք արարական այբուրենը կազմված է հետևյալ ձևով.

Հ | Օվողաճայլ տպար.

۲۰۱۷

٣. ح، خ، ج، ح، خ، ج

۴۲۷

15. 3. 1971

ش ۲، س ۱۰، ۶.

٢١ ض، "، مص، ٢٠

س ط ظ

٩. ع ، غ

## 10. ف f, ق q.

Մնացյալ տառերը նմանություններ չեն ներ-  
կայացնում:

Երբ պարսիկները և թուրքերը ընդունեցին  
տրաքական այրուբենը և իրենց լեզվի պահանջի  
համաձայն նոր տառեր ավելացրին, այդ տառերը  
ներմուծեցին գործայլ ձևի նմանության համա-

Ճայն. Այսպես ու գրին Յ. Իշ շաբախ, ըստ

գրին 3-րդ շարքում, յ և գրին 5-րդ շարքում և

5 7 7565 5 6 սառի մոռ.

